

կ'որոշէ որեւէ կերպով հեռանալ Կ.Պոլսէն եւ մեկնիլ ի շում: Նոյն միջոցին Կիպրոսի առաջնորդութիւնը ազատ ըլլալով՝ կը խնդրէ, կ'ընդունի, եւ 1774 չօկտ. 26ին կը մեկնի Պոլսէն:

Սակայն Մուրատեան Գասպար Ամիրայն թող չե.տար որ Կրիգոր մեկնելու օրն իր ձերունի մօրմէն հրաժարական եւ օրհնութիւն առնուէ, այլ նոյն գիշերը ՝ ի ձեռն Համբարձումին իւրոյ Իսկիւտարցւոյ՝ Չօպանեանց օրհնեալ տնէն ուղղակի փոքրիկ մակոյկ մը դնել կու տայ: Ճամբան փոթորկէն ուղեւորներէն ոմանք կը խղզուին, եւ ինքն հազիւ հրաշքով Կիպրոս կը հասնի: («Յիշատ.» «Ողջունագիր... առ ընթերցողսդ գրուած 30 Մարտ 1789, տակաւին անտիպ:)

Քայց իր բուն որոշումն էր Եւրոպայ երթալ. 11 ամիս ետքը նաև մը գտնելով երկար ճամբորդութենէն ետեւ, հասաւ Վենետիկ 1776 Փետր.ի մէջ, եւ հոն Հայոց եկեղեցւոյն մօտ տուն մը վարձեց: Ասկէ Ս. Ժողովոյն գրեց շում երթալու եւ Ս. Քահանայապետին ներկայանալու համար: Ս. Ժողովը զինք սիրով հրաւիրեց եւ Հայոց օթեւանին մէջ իրեն համար մասնաւոր տեղ պատրաստել տուաւ. ինչպէս կը գրէ շումէն Սարգիս Վ. Թէքիրտաղցի առ Սամուէլ Եպ. ի Պոուսա 1776ին (Գիւ. Անտ.), «ԳՏէր Տիմոթէոսի սենեակն ծեփեցին եւ ներկեցին եւ ի միջի զկահս ասթոռօք եւ վարագուրօք ի փրփականտայէն. եւ մեծ մութվախը եւս իւր զատեցին»: Ըստ ն. տ. Մայիս 28ին Վենետիկէն մեկ-